

ՀՈՎՅԱԼՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ: Կենսամատենագիտություն (2001–2020),
Երևան, Հայաստանի ազգային գրադարան, 2020, 444 էջ*:

Բանալի բառեր՝ կենսամատենագիտություն, աղբյուրագիտություն, պարբերական մամուլ, գիտական ուսումնասիրություններ, կառուցվածքային առանձնահատկություններ, թեմատիկ բաժանում, մատենագիտական նկարագրություն չափորոշիչներ:

Յուրաքանչյուր կենսամատենագիտություն արտացոլում է որևէ գործչի կյանքի ու գործունեության ամփոփ պատկերը՝ միևնույն ժամանակ



գծագրելով ժամանակաշրջանը: Ընթերցողի սեղանին դրված «Հովհաննես Թումանյան» կենսամատենագիտության հերթական հատորը բացառություն չէ (կազմողներ՝ Անուշ Ամիրջանյան, Օլյա Աղայան, խմբագիրներ՝ Բ. Գ. Սուսաննա Հովհաննիսյան, Բ. Գ. Թ. Մայա Գրիգորյան):

Սույն կենսամատենագիտության մեջ ներառված են 2001–2020 թթ. տպագրված բանաստեղծի ստեղծագործությունների, փոխադրությունների, թարգմանությունների, նամակների, գրաքննադատական հոդվածների, ինչպես նաև նրա կյանքին ու գործունեությանը նվիրված հրապարակումների մատենագիտական նկարագրությունները: Այս կենսամատենագիտությունը տրամաբանական շարունակությունն է Հայաստանի ազգային գրադարանի տպագրած «Հովհաննես Թումանյան: Կենսամատենագիտություն» գրքերի, որոնք հատվածաբար ներառել են 1970–2000 թթ. տպագրված նյութերի մատենագիտական նկարագրությունները: Կարծում ենք՝ բավական ընդգրկուն ծավալ կազմող այս նյութերի մեկտեղումն այսօր արդիական է և անհրաժեշտ:

Ինչպես յուրաքանչյուր կենսամատենագիտության, խնդրո առարկա մատենագիտության նպատակն է. ա. ներկա և ապագա սերունդներին հասանելի ու ընկալելի դարձնել մեծ բանաստեղծի ստեղծագործական աշխարհը, Բ. Բացաճախել նրա ազգային, հայրենասիրական գործունեության ենթաշերտերը, որոնք այսօր ունեն արդիական հնչեղություն և որոնց նկատմամբ պահանջարկը չի նվազում ոչ մի ժամանակաշրջանում:

Կենսամատենագիտության մեջ ընդգրկվել են միայն հայերեն և ռուսերեն նյութեր: Ամենայն հայոց բանաստեղծի գրական ժառանգությունը թարգմանվել է աշխարհի ամենատարբեր լեզուներով: Հարուստ է նաև նրան նվիրված օտարալեզու հրապարակումների ցանկը, սակայն հսկայածավալ այդ

* Ներկայացվել է 17. IV. 2021 թ., ընդունվել է տպագրության 06. V. 2021 թ.:

նյութը դեռ կարիք ունի ուսումնասիրման, ինչն էլ առաջիկայում, հուսով ենք, կդառնա առանձին մատենագիտության թեմա:

Կենսամատենագիտությունն ունի կուռ կառուցվածք. առանձնացվել են պայմանական մեծ թեմաներ, որոնց ներքո նյութերը դասակարգվել են ըստ տարիների, իսկ տարիների մեջ պահպանվել է այբբենական դասավորության պարտադիր պայմանը:

Գրքի սկզբում տեղ է գտել բ. գ. դ., թումանյանագետ, գրքի խմբագիրներից Սուսաննա Հովհաննիսյանի առաջաբանը: Ներածական խոսքում նա անդրադարձ է կատարում բանաստեղծին նվիրված բոլոր մատենագիտություններին՝ արժևորելով յուրաքանչյուրն իր տեղում ու ժամանակի մեջ: Նախաբանը նաև ամփոփ պատկերացում է տալիս թումանյանագիտության զարգացման ուղու մասին, որի առանձին փուլերի ամբողջացման շնորհիվ ներկա սերունդն ունի շոշափելի ձեռքբերում:

Կենսամատենագիտության մեջ նյութերը ներկայացված են պայմանական մեծ խորագրերի ներքո, որոնցից առաջինը բանաստեղծի ստեղծագործությունների ժողովածուներն ու առանձին գրքերով տպագրված ստեղծագործություններն են: 2001–2020 թթ. ընթացքում Հովհ. Թումանյանի ստեղծագործությունները պարբերաբար վերահրատարակվել են Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Գրքի կազմման ժամանակ ձեռք բերված համագործակցության արդյունքում Հայաստանի ազգային գրադարանը համալրվել է գրեթե բոլոր հրատարակություններով, իսկ դրանց մատենագիտական նկարագրությունները ներառվել են սույն գրքում: Մանրամասնված են այդ բոլոր ժողովածուների բովանդակությունները: Սա հնարավորություն է տալիս ընթերցողին արագ կողմնորոշվել և ընտրել այն, ինչն անհրաժեշտ է իրեն: Յուրաքանչյուր ժողովածուի կամ առանձին ստեղծագործության հրատարակություն ունեցել է իր անդրադարձը մամուլում՝ գրախոսության ձևաչափով: Այդ գրախոսություններն առանձնացվել և արտացոլվել են համապատասխան գրքի մատենագիտական նկարագրությունից հետո: Կառուցվածքային նման հնարանքը թույլ է տվել միաժամանակ ծանոթանալու գրքին, ուսումնասիրել նրա բովանդակությունն ու անդրադառնալ կոնկրետ վերլուծությանը:

«Գեղարվեստական ստեղծագործությունները պարբերական մամուլում և ժողովածուներում» խորագրի ներքո առանձնացվել են բանաստեղծի պարբերական մամուլում ու ժողովածուներում տպագրված գեղարվեստական ստեղծագործությունները: Յուրաքանչյուր վերնագրի կողքին նշվել է տվյալ երկի ժանրային պատկանելիությունը: Քանի որ բանաստեղծի ստեղծագործություններն ունեն ժողովրդական ճանաչում և մեծ տարածում, այդ պատճառով դրանց քանակը բավական ընդգրկուն է: Թումանյանին հղում են արել ամենատարբեր բնագավառների ներկայացուցիչներ, նրա ստեղծագործությունների առանձին հատվածներ օգտագործվել են որպես բնաբան տարաբնույթ գրքերի համար:

«Հոդվածներ, գեկույցներ, ասույթներ պարբերական մամուլում և ժողովածուներում» խորագրով առանձնացվել են Թումանյանի հրապարակախոսական նյութերն ու ասույթները: Հավատարիմ մնալով մատենագիտական նկարագրության չափորոշիչներին՝ կազմողները ներկայացրել են հոդվածի

կամ զեկուլյցի հակիրճ բովանդակությունը, ասույթի առաջին բառերը: Այս խորագիրը բացահայտում է հայրենասեր ու ազգասեր բանաստեղծի էությունը, ով մտահոգ է իր ժողովրդի ճակատագրով: Գերակշռում են այն նյութերը, որոնց մեջ արտացոլվել են բանաստեղծի հայրենիքի, պետության, ազգի, կրթության և դաստիարակության մասին տեսակետն ու տեսլականը:

Խոսում է «Հովհաննես Թումանյանի կատարած թարգմանությունները և փոխադրությունները» խորագիրը, ուր ներառվել են բացառապես բանաստեղծի կատարած թարգմանություններն ու փոխադրությունները: Նրա ստեղծագործությունների թարգմանությունները, ինչպես նշեցինք, դեռ կարիք ունեն ուսումնասիրության: Այս թեմայի ներքո ներկայացվել են ինչպես առանձին տպագրված գրքեր, այնպես էլ պարբերական մամուլում ներկայացված առանձին երկերի թարգմանություններ: Դրանց մեջ հատկապես աչքի են ընկնում Ալ. Պուշկինի, Ն. Նեկրասովի, Գրիմմ եղբայրների ստեղծագործությունների, նաև տարբեր հեքիաթների թումանյանական թարգմանությունները, որոնք վերահրատարակվել են բազմաթիվ անգամներ, սակայն չեն կորցրել իրենց արդիականությունն ու հյուսիսեղ հնչողությունը:

«Նամակներ, ընծայագրեր» խորագրի ներքո ընդգրկվել են ինչպես Հովհ. Թումանյանի գրած նամակները, այնպես էլ նրան ուղղված նամակներն ու ընծայագրերը: Այս բաժինն արտացոլում է բանաստեղծի անձնական կյանքը, նրա ներընտանեկան հարաբերություններն ու հասարակական հայանապատ գործունեությունը: Ներառվել են նամակների ժողովածուներ, պարբերական մամուլում տպագրված առանձին նյութեր: Մեկնաբանված է յուրաքանչյուր նամակի բովանդակությունը:

Առավել ընդգրկուն է «Գրքեր Հովհաննես Թումանյանի մասին» բաժինը, ուր ամփոփվել են Ամենայն հայոց բանաստեղծի կենսագործունեությանն ու ստեղծագործությանը նվիրված հետազոտությունները: Այս բաժնում ամփոփվել են միայն այն մենագրություններն ու ժողովածուները, որոնք ամբողջությամբ նվիրված են բանաստեղծին: Մանրամասն ներկայացված են բոլոր գրքերի բովանդակային շերտերը, որոնց հաջորդում են համապատասխան գրախոսությունները, եթե այդպիսիք եղել են: Վերջին 20 տարիների ընթացքում տպագրվել է 84 մենագրություն կամ գիտական ուսումնասիրություն, ինչը խոսում է բանաստեղծի անձի և ստեղծագործության նկատմամբ չմարող հետաքրքրության մասին: Առավել բեղուն են եղել հոբելյանական տարիները, հատկապես՝ 2019 թ., երբ աշխարհասփյուռ հայությունը նշում էր բանաստեղծի ծննդյան 150-ամյակը: Որոշ ուսումնասիրություններ վերահրատարակվել են՝ համապատասխան լրացումներով և հավելումներով:

Կենսամատենագիտության ամենածավալուն բաժինը կազմում են Հովհ. Թումանյանի մասին առանձին հղվածները: Պահպանելով բոլոր նյութերի ժամանակագրական և այբբենական դասավորության սկզբունքը՝ այս բաժնում ամփոփվել են պարբերական մամուլում, առանձին ժողովածուներում, ինչպես նաև տարբեր մենագրություններում Ամենայն հայոց բանաստեղծին նվիրված հոդվածների մատենագիտական նկարագրությունները՝ շուրջ 1926 նյութ: Ի տարբերություն նախորդ գրքերի, այս բաժնում ներառվել են նաև այն ուսումնասիրությունները, որոնց մեջ ամփոփված են գրողի կյանքին ու գործունեությանը նվիրված նյութերը: Կենսամատենագիտության այս բա-

ժինն առավել ամբողջական դարձնելու նպատակով ուսումնասիրվել են Հայաստանում ու նրա սահմաններից դուրս տպագրված հայերեն և ռուսերեն պարբերականները, որոնց թիվը բավական խոստուն է: Չնայած մատենագետները ջանացել են ընդգրկել բոլոր պարբերականները և ամբողջական դարձնել մատուցվող նյութը, այնուամենայնիվ, կարծում ենք, կլինեն որոշ աղբյուրներ, որոնք տարբեր պատճառներով չի հաջողվել ուսումնասիրել:

Բանաստեղծի և հայ մշակույթի ամուր կապի մասին է խոսում «Հովհաննես Թումանյանը արվեստում» խորագիրը, ուր ամփոփվել են արվեստի տարբեր ճյուղերում արտացոլված նրա ստեղծագործությունների մասին նյութերի՝ գրքերի և հոդվածների մատենագիտական նկարագրությունները: Արվեստի գրեթե բոլոր բնագավառներում կարելի է տեսնել ու գտնել Թումանյանի շունչն ու հոգին:

Կենսամատենագիտության մեջ առանձնացված են նաև «Հովհաննես Թումանյանի թանգարանները», «Հովհաննես Թումանյանը գեղարվեստական գրականության մեջ» բաժինները՝ համապատասխան թեմատիկ նյութերով, որոնք, ճիշտ է, նույնքան ծավալուն չեն, ինչպես նախորդները, սակայն կարևոր են բանաստեղծին նոր տեսանկյունից մեկնաբանելու առումով:

Գրքի վերջում առկա է «Անձնանունների ցանկ», որը կազմված է ըստ մատենագիտական նկարագրությունների հերթական համար(ների): Պահպանված են անձնանունների գրության ձևերն ու ուղղագրությունը: Եթե նույն անձնանունը գրվել է երկու ուղղագրությամբ՝ դասական և ժամանակակից, ցանկի մեջ նախապատվություն տրվել է ժամանակակից ուղղագրությանը: Կիրառվել է մատենագիտության մեջ ընդունված «տես»-ի սկզբունքը՝ անձնանունների ցանկն ավելի ամբողջական դարձնելու նպատակով: Անձնանունները դասավորված են ըստ ազգանունների այբբենական կարգի: Հասկանալի պատճառով անձնանունների ցանկում չի ընդգրկվել Հովհաննես Թումանյանի անունը:

«Բովանդ» ծանոթագրության ներքո ամփոփվել է բովանդակությունը: «Գրախոս» ծանոթությամբ ներկայացվել է տվյալ գրքի կամ ժողովածուի վերաբերյալ պարբերականներում, գիտական ամսագրերում տպագրված գրախոսությունները՝ դրանք տեղադրելով համապատասխան գրքի մատենագիտական նկարագրության վերջում: Մատենագիտական նկարագրությունների մեջ կիրառված փակագծերում [], արտացոլվել են կազմողների ծանոթագրությունները: Նպատակը՝ հստակ պատկերացում տալ այն նյութերի մասին, որոնց վերնագրերը լիովին չեն բացահայտում բովանդակությունը:

Կենսամատենագիտության կազմման համար ուսումնասիրվել են Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուները: Սակայն ուսումնասիրությունը միայն այս սահմանում չի պարփակվել: Կազմման աշխատանքների ընթացքում մատենագետները համագործակցել են Հայաստանում և Թբիլիսիում գործող գիտական, հասարակական, մշակութային կառույցների ու կազմակերպությունների, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, տարբեր բուհերի համապատասխան ամբիոնների, ՀՀ տարբեր հրատարակչությունների հետ, ինչը հնարավորություն է տվել առավել ամբողջական դարձնել աշխատանքը: Նման մոտեցման շնորհիվ գրքում արտացոլվել են վերջին 20 տարիներին տպագրված գրեթե բոլոր հրապարակումները:

Կարծում ենք՝ կատարված աշխատանքը խոսում է Ամենայն Հայոց բանաստեղծի անձի և ստեղծագործության նկատմամբ չմարող հետաքրքրության մասին: Փոխվում են ժամանակները, մինչդեռ բոլոր սերունդների համար Թումանյանը մնում է անանց արժեք:

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Բ. գ. թ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի գիտական քարտուղար, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ թանգարանապետության, գրադարանապետության և մատենապետության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ XIX–XX դդ. հայ գրականության պատմություն, հայ տպագրության, մատենապետության և մամուլի պատմություն: Հեղինակ է 26 հոդվածի: grigoryan_maya@mail.ru